

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

1997 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊԱՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՑՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՃԽԱ-  
ՏԱԾ ՎԱՌԵԼԻՔԻ ԵՎ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՎՏԱՆ-  
ԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՏԵՂ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՑՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈ-  
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

22 հունվարի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանք՝ կազմով.  
Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի,  
Ա. Խաչաբրյանի, Վ. Դովիաննիսյանի, Ռ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),  
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայա-  
ցուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի եւ բնական պաշարների նա-  
խարար Ա. Մովսիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-  
վածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դադա-  
րանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1997 թվականի սեպտեմ-  
բերի 5-ին Վիեննայում սպորագրված՝ Աշխարած վառելիքի եւ ռադիոակտիվ  
թափոնների կառավարման անվտանգության մասին համագրեղ կոնվենցիայում ամ-  
րագրված պարբակորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանա-  
դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2012 թվականի դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարան մուլտագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցի գրավոր բացագրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **Պ Ա Ր Զ Ե Յ .**

**1. Աշխագած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին համագործակցության կոնվենցիան (Կոնվենցիա) սպորագրվել է 1997 թվականի սեպտեմբերի 5-ին՝ Վիեննայում:**

**2. Կոնվենցիայի նպատակներն են՝**

- հասնել աշխագած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման ոլորտում անվտանգության բարձր մակարդակի եւ պահպանել այն ողջ աշխարհում՝ ազգային միջոցների եւ միջազգային համագործակցության ամրապնդման միջոցով՝ ներառյալ, համապատասխան դեպքերում, անվտանգությանն առնչվող դեխնիկական համագործակցությունը.

- ապահովել, որ աշխագած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման բոլոր փուլերի ընթացքում առկա լինեն պաշտպանական արդյունավետ միջոցներ հնարավոր վրանգների դեմ, որպեսզի անձինք, հասարակությունն ու շրջակա միջավայրը պաշտպանված լինեն իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցություններից ներկա պահին եւ ապագայում այնպես, որ ներկա սերնդի կարիքներն ու ձգբումները բավարարվեն՝ զվարացնելով ապագա սերունդների՝ իրենց կարիքներն ու ձգբումները բավարարելու կարողությունը.

- կանխել ռադիոլոգիական հետեւանքներով վթարները եւ մեղմել դրանց հետեւանքները, եթե վթարը գեղի է ունեցել աշխագած վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների կառավարման ցանկացած փուլում:

**3. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, սպանձնում է հետեւյալ պարզավորությունները.**

ա) ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ աշխագած վառելիքի կառավարման բոլոր փուլերում անձինք, հասարակությունը եւ շրջակա միջավայրը պարզած կերպով պաշտպանված լինեն ռադիոլոգիական վրանգներից, այդ թվում՝

- ապահովել, որ աշխափած վառելիքի կառավարման ընթացքում առաջացած կրիստոնյական վիճակն ու մնացորդային ջերմության հեռացման հարցերը պարզած արձագանք սրբանան,

- հաշվի առնել կենսաբանական, քիմիական և այլ վրանգները, որոնք կարող են առնչվել աշխափած վառելիքի կառավարման հետ,

- խուսափել այնպիսի գործողություններից, որոնց ողջամփորեն կանխափեսելի հետեւանքներն ավելի լուրջ կլինեն ապագա սերունդների համար՝ ներկա սերնդի համար թույլափրելի հետեւանքների համեմագ.

բ) գրեղակայանքների նախագծման և կառուցման շրջանակներում ձեռնարկել համապարասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ.

- աշխափած վառելիքի կառավարման գրեղակայանքի նախագծմամբ եւ կառուցմամբ նախագրեսվեն համապարասխան միջոցներ՝ սահմանափակելու համար անձանց, հասարակության և շրջակա միջավայրի վրա հնարավոր ռադիոլոգիական ազդեցությունները, ներառյալ արդանելումների և չվերահսկվող արդանելումների ազդեցությունները,

- նախագծման փուլում հաշվի առնվեն աշխափած վառելիքի կառավարման գրեղակայանքը շահագործումից հանելու հայեցակարգային նախագծերը եւ, անհրաժեշտության դեպքում, գրեղակայանքի դրույթները,

- աշխափած վառելիքի կառավարման գրեղակայանքի նախագծման և կառուցման գրեղակայանքի հիմնված լինեն փորձի, փորձարկումների կամ վերլուծությունների վրա.

գ) գրեղակայանքների շահագործման շրջանակներում ձեռնարկել համապարասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ աշխափած վառելիքի կառավարման գրեղակայանքի շահագործումը, սպասարկումը, վերահսկումը, սպուգումներն ու փորձարկումները իրականացվեն սահմանված ընթացակարգերի համաձայն.

դ) աշխափած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգությունը կարգավորելու նպատակով սահմանել և պահպանել իրավական և կարգավորող շրջանակ, որով ապահովում է.

- ճառագայթային անվտանգության համար անվտանգության ազգային պահանջների և կանոնակարգերի սահմանում,

- աշխափած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման գործունեության լիցենզավորման համակարգ,

- աշխարած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման գեղակայանքն առանց լիցենզիայի առկայության շահագործման կանխելու համակարգ,
- պարզած ինսպիրուցիոնալ վերահսկողության, կարգավորող սպուրումների եւ փաստաթղթերի ու հաշվեբությունների ներկայացման համակարգ,
- կիրառելի կանոնակարգերի եւ լիցենզիաների պայմանների հարկադիր կարգարում,
- աշխարած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման գարբեր փուլերում ներգրավված մարմինների պարբականությունների հսկակ բաշխում.

Ե) հիմնել կամ նշանակել կարգավորող մարմին, որին հանձնարարվում է իրականացնել Կոնվենցիայով նախագեսված իրավական եւ կարգավորող շրջանակի իրականացումը, եւ որին դրամադրվում են պարզած լիազորություններ, իրավասություններ, ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ՝ սրանձնած պարբավորությունները կարարելու համար.

գ) ձեռնարկել համապարասխան քայլեր՝ ապահովելու համար, որ նախագեսված լինեն ֆինանսական միջոցներ, որոնք թույլ կրան իրականացնելու համապարասխան ինսպիրուցիոնալ վերահսկողություն եւ մոնիթորինգ՝ թաղման գեղակայանքը փակելուց հետո անհրաժեշտ համարվող ժամանակահարվածում.

Ե) ձեռնարկել համապարասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ արգանելու սահմանափակվեն, որպեսզի ոչ մի անձ նորմալ իրավիճակներում չենթարկվի ճառագայթային այնպիսի դոզաների, որոնք գերազանցում են դոզաների սահմանափակման պերական հրահանգները, որոնցում պարզած կերպով հաշվի են առնված ճառագայթումից պաշտպանության՝ միջազգայնորեն ընդունված սրանդարվները.

ը) ձեռնարկել համապարասխան միջոցներ՝ ապահովելու համար միջուկային գեղակայանքի անվրանգությունը շահագործումից հանելու ընթացքում, այդ թվում՝ ապահովել, որ առկա լինեն որակավորված աշխարակազմ եւ համապարասխան ֆինանսական միջոցներ:

**4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության սրանձնած պարբավորությունները համահուն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9, 10 և 33.2-րդ հոդվածների, 48-րդ հոդվածի 10-րդ կետի դրույթներին եւ հնարավորություն են դալիս Հայաստանի Հանրապետությանը միանալու համաշխարհային միջուկային համայնքի կողմից աշխարած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների անվրանգ կառավարման կարեւորությունը ճանաչելու և ապահովելու գործընթացին:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Ց .**

**1.** 1997 թվականի սեպտեմբերի 5-ին Վիեննայում սփորագրված՝ Աշխատած վառելիքի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին համագեղ կոնվենցիայում ամրագրված պարբավորությունները համապարասիանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

#### ՆԱԽԱԳԱՇՈՂ

22 հունվարի 2013 թվականի

ՍԴՈ - 1069

#### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ